


Prec 24 ft

Upg 24 ft - upped up 2 -



6 NOV 2011

Վ. ԲԻԱՆԿԻ

# ՄՐՁՆԻԿԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ



ՆԿԱՐՆԵՐԸ Վ. ՏԱՄԲԻՆԻ  
ՔԱՐԳ. Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

891.7115

R-62 ՀԽՍՀ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ Օ 1936

48



Մըջնիկը բարձրացավ կեչու վրա, հասավ զագաթին՝ նայեց ցած՝ գետնին, տեսավ վոր իր հարազատ մըջնոցը հազիվ հազ ելերմում։

Մըջնիկը նստեց տերեկի վրա և մտածեց. «Քիչ կհանգստանամ, կիջնեմ»։

Չե վոր մըջյունների որենքները շատ խիստ են. հենց վոր արեն սկսում ե մայր մտնել բոլորը տուն են վագում։ Արեկ վոր մայր մտավ, բոլոր յելք ու մուտքերը փակում են ու քնում։ Իսկ ով ուշացավ ուշացավ, թեկուզ դուրսր քնի։

Արեն արդեն դեպի անտառն եր իջնում։

Մըջնիկը, տերեկի վրա նստած, մտածում եր. «Վոչինչ, կհասնեմ. չե վոր իջնելը հեշտ ե, արագ կիջնեմ»։

Իսկ տերեկը վատ տերեկ եր. դեղին, չոր Քամին փչեց ու ճյուղից պոկեց։

Թռչում եր տերեն անտառի, գետի, գյուղի վրայով։

Թռչում եր մըջնիկը տերեկի վրա նրստած, որորվում եր, վախից լեղին ճաքել եր։

Քամին տերեկը տարավ գյուղի յետեղում գտնվող մարզագետինը և ցած գցեց։ Տերեն ընկավ քարի վրա, մըջնիկի վոտները վիրավորվեցին։

Պառկել եր մըջնիկը և մտածում եր. «Յես կորաւ ել տուն հասնել չեմ կարող։ Չորս կողմը հարթ եւ Յեթե առողջ լինեյի, իսկույն կվաղեյի, բայց վոտներս ցավում են»։

Մըջնիկը նայեց, տեսավ, վոր կողքին պառկած ե հողաչափ-թրթուրը ծիճու յե, վոր ճիճու յե, միայն առջեվից ել վոտներ ունի, յետեվից ել։

Մըջնիկն ասաց.



— Հողաչափ, այ հողաչափ, ինձ տուն  
տար: Վոտներս ցավում են:

— Իսկ չես խայթի:  
— Վո՛չ, չեմ խայթի:  
— Դե, նստիր, տանեմ:

Մըջնիկը մագլցեց հողաչափի մեջքի  
վրա: Հողաչափը մարմինն աղեղի նման լա-  
րեց, յետեի վոտները դրեց առջեփ վոտ-  
ների, պոչն ել զլխի մոտ: Հետո հանկարծ  
հասակովը մին կանգնեց և փայտի նման  
պառկեց գետնին: Գետնի վրա իր հասակը  
չափեց ու ելի վոլորվեց: Այդպես ել գետինը  
չափելով, չափելով, գնաց: Մըջնիկը մին դե-  
պի գետինն եր թռչում, մին դեպի յերկինքը,  
մին գլուխը դեպի ցած, մին դեպի վերև:

— Ել չեմ կարող, — բղավեց, — կանգնիր,  
թե չե կկծեմ:

Հողաչափը կանգնեց, գետնի վրա ձգվեց:  
Մըջնիկը, հազիվ շունչ քաշելով, իջավ:

Նայեց, տեսավ առջեին մի մարգագետին  
կա, մարգագետնի վրա ել՝ հնձված խոտ: Իսկ  
մարգագետնով խոտհարսարդն ե քայ-  
լում. վոտներն ինչպես վոտնափայտեր,  
գլուխն ել վոտների արանքում տատան-  
վում ե:

— Սարդ, այ սարդ, ինձ տուն տար:  
Վոտներս ցավում են:

— Ի՞նչ կա վոր, նստիր, կտանեմ:  
Մըջնիկը սարդի վոտով բարձրացավ  
մինչև ծունկը, ծնկնից ել իջավ մեջքի  
վրա. խոտհարի ծնկները մեջքից վեր  
ելին ցցված:

Սարդն սկսեց իր վոտնափայտերը շար-  
ժել — մի վոտն այստեղ ե, մյուսն այն-  
տեղ, ութ վոտ ունի, կարծես ճաղեր լինեն:  
Մըջնիկի աչքը շաղվեց. իսկ սարդն արագ  
չեր գնում, փորը գետնին եր քսում: Այս-



սլիսի ճանապարհորդությունից մըջնիկը  
ձանձրացավ։ Քիչ մնաց, վոր սարդին կծի։  
Այդ ժամանակ, բարեբախտաբար, հարթ ճա-  
նապարհը դուրս յեկան։ Սարդը կանգնեց։

— Իջիր, — ասում ե։ — Առա գնայուկ-  
բզեզն ե վազում։ Նա ինձանից կայտառ ե։  
Մըջնիկն իջավ։

— Բզեզ, այ բզեզ, ինձ տուն տար։ Վոտ-  
ներս ցավում են։

— Նստիր, կտանեմ։

Հենց վոր մըջնիկը մազլցեց բզեզի մեջ-  
քի վրա, բզեզն սկսեց վազել։ Բզեզի վոտ-  
ները ձիու վոտների նման համաշափ են։  
Վազում եր վեց վոտնանի ձին ու վազում։  
Թափ չեր տալիս, կարծես ողով եր թռչում։

Մի ակնթարթում կարտոֆիլի դաշտը  
հասավ։

— Դե, հիմա իջիր, — ասաց բզեզը, — իմ  
վոտները կարտոֆիլի մարդերի վրայով  
ցատկել չեն կարող։ Ուրիշ ձի գտիր։

Մըջնիկն իջավ։

Կարտոֆիլի ցողունները մըջնիկի հա-  
մար խիտ անտառ ե։ Առողջ վոտներով ել  
մի ամբողջ որ պետք եր վազել, իսկ արևն  
արդեն իջել եր։

Հանկարծ մըջնիկը լսեց, վոր մեկը ծրվ-  
ծրվում ե։

— Դե, մըջնիկ, մեջքիս նստիր, տանեմ։

Մըջնիկը յետ նայեց, տեսավ կողքին  
կանգնած ե լվիկ-բզեզիկը։ Գետնի վրա  
հազիվ ե յերեվում։

— Ախր դու պստիկ ես, ինձ վհնց կտա-  
նես։

— Իսկ դու մեծ ես։ Նստիր, ասում եմ։

Մըջնիկը մի կերպ տեղավորվեց լվիկ-  
բզեզիկի մեջքի վրա։ Միայն վոտները տե-  
ղավորվեցին։



— Բարձրացար:

— Բարձրացա:

— Վոր բարձրացար, պինդ կաց:

Կվիկ-բղեգիկն իր յետի հաստիկ վոտները փորի տակը քաշեց, իսկ այդ վոտները ծալովի զսպանակի նման են, և չը թթ, վոտները պարզեց: Նայիր, արդեն մարդի մեջ նստած եւ Զը թթ,— մյուս մարդը: Զը թթ՝ յերբորդը:

Այդպես վոլջ բանջարանոցում, մինչեվ ցանկապատը, շրթշրթացը եց:

Մը ջնիկը հարցրեց.

— Իսկ ցանկապատի վրայով կարող ես ցատկել:

— Ցանկապատի վրայով ցատկել չեմ կարող, շատ եւ բարձր: Խնդրիր մորեխին: Մորեխը կարող եւ:

— Մորեխ, այ մորեխ, ինձ տուն տար, վոտներս ցավում են:

— Նստիր ծոծրակիս:

Մը ջնիկը նստեց մորեխի ծոծրակին:

Մորեխն իր յետի յերկար վոտները ծալեց, տպա ուղղեց և գնդակի նման ողի միջավ թռավ: Թեվերը շրթալով տարածվեցին, մը ջնիկին ցանկապատից անց կացրին և կամաց գրին գետնին:

— Դե, հասանք, — ասաց մորեխը:

Մը ջնիկը տեսավ, վոր իր առաջին մի գետ կա, մի տարի ել վոր լողաս, ափին չես հասնի:

Իսկ արեն իջնում եր ու իջնում:

Մորեխն տաց.

— Գետի վրայով թռչել չեմ կարող, շատ եւ լայն: Մի սպասիր, ջրաչափին ձայն տամ, նա քեզ անց կկացնի:

Իր եղվով ջրաչափին կանչեց: Մին ել տեսան ջրի միջով վոտներ ունեցող մի նագակ եւ լողում:

Մոտեցավ:



Տեսան, վոր նավակ չե, ջրաչափն ե:  
— Ջրաչափ, այ ջրաչափ, ինձ տար տուն,  
վոտներս ցավում են:

— Լավ, նստիր, կտանեմ:

Մըջնիկը նստեց: Ջրաչափը ցատկեց և  
սկսեց ջրի վրա քայլել այնպես, ինչպես  
ցամաքի վրա:

Իսկ արեվը բոլորովին իջել եր:

— Մի քիչ արագ գնա,— խնդրեց մըջնիկը, — թե չե ինձ տուն չեն թողնի:

— Կարելի յե և արագ գնալ, — պատասխանեց ջրաչափը:

Մին ել վոր չափ չընկավ: Վոտներով  
հուզ տվեց, հուզ տվեց և ջրի վրայով սա-  
հեց: Շուտով մյուս ափին հասավ:

— Իսկ գետնի վրայով չես կարող գը-  
նալ, — հարցրեց մըջնիկը:

Գետնի վրայով ինձ համար դժվար  
կլինի. վոտներս չեն բռնի: Նայիր, առջե-  
վիդ անտառ ե: Քեզ համար ուրիշ ձի գր-  
տիր:

Մըջնիկը նայեց, տեսավ, վոր գետի մոտ  
բարձր անտառ ե, մինչեւ յերկինքը: Արևն  
ել անտառի յետեն ե մտել:

Չե, տուն հասնել չի կարող:

— Նայիր, ասաց ջրաչափը, — ահա քեզ  
համար մի ձի յե գալիս:

Մըջնիկը տեսավ, վոր սողալով գալիս  
ե մայիսյան բղեգը, ծանր, անշնորհք բղե-  
գը: Այդպիսի ձիով կարող ես հեռու գնալ:

Այնուամենայնիվ ջրաչափի խոսքը լսեց:

— Բզեզ, այ բղեզ, ինձ տուն տար: Վոտ-  
ներս ցավում են:

— Իսկ զու վորտեղ ես ապրում:

— Անտառի յետեվում, գտնվող մըջնո-  
ցում:

— Հեռու յե... Բայց դե ի՞նչ անենք, նըս-  
տիր, կտանեմ:



Մրջնիկը բգեղի կոշտ կողքից վեր սողաց:  
— Նստեցի՞ր:  
— Նստեցի:  
— Իսկ վորաճ՝ նստեցիր:  
— Մեջքիդ:  
— Հիմար: Գլխիս նստիր:

Մրջնիկը հստեց բգեղի գլխին: Յեվ լավ  
արավ, վոր մեջքին չմնաց. բգեղն իր մեջ-  
քը յերկու մաս արավ, յերկու կոշտ թևե-  
րը բարձրացրեց: Բգեղի թեվերը կարծես  
թե շուռ տված տաշտ լինեն, իսկ նրանց  
տակից ուրիշ թևեր են գուրս գալիս — բա-  
րակ, թափանցիկ, վերեկ թևերից ավե-  
լի լայն ու յերկար:

Բգեղն սկսեց հեալ, ուռչել — ուփ, ուփ,  
ուփ: Կարծես մստոր եր լարում:

— Հորեղբայր, սիրելի հորեղբայր, շուտ  
արա, շուտ արա, — խնդրեց մրջնիկը:

Բգեղը չպատասխանեց, շարունակեց հե-  
վար:

— Ուփ, ուփ, ուփ:

Հանկարծ բարակ թևերը գողգողացին,  
աշխատեցին — ժժժ, տուկ, տուկ, տուկ և  
բգեղն ողը բարձրացավ:

Մրջնիկը վերեկց տեսավ, վոր արեկ  
ծայրը գետնին և դիպել:

Բգեղն այնպես եր սլանում, վոր մըրջ-  
նիկի շունչը կտրվում եր — ժժժ, տուկ,  
տուկ, տուկ: Գնդակի նման ողը ծակերով  
անցնում եր:

Անտառն անհայտացավ:

Ահա և ծանոթ կեչին, մրջնոցն ել տա-  
կին:

Կեչու կատարին հասնելով, բգեղը մո-  
տորը կանգնեցրեց և ճյուղի վրա նստեց:

— Հորեղբայր, սիրելի հորեղբայր — խընդ-  
րեց մրջնիկը, — ըստ ինչպէս ցած իջնեմ:  
ԶԵ վոր գոտներս ցավում են:



Բզեզն իր բարակ թեփերը ծալեց, զրեց  
մեջքին, վերևից կոշտ տաշտակներով ծած-  
կեց, բարակ թերի ծայրերը կանոնավոր  
կերպով տաշտակի տակ դրեց:

Հետո մտածեց ու ասաց:

— Չգիտեմ, թե ինչպես ցած իջնես: Յես  
մըջնոցի մոտ չեմ գնա, շատ պինդ եք կը-  
ծում դուք: Գնա, ինչպես կարող ես:

Մըջնիկը ցած նայեց, տեսավ, վոր ծա-  
ռի տակ իր հարազատ տունն ե: Նայեց  
արևին, տեսավ, վոր մի գոտկաչափ գետնի  
մեջն ե մտել:

Շուրջը նայեց, տեսավ միայն ճյուղեր  
ու տերեներ, տերեներ ու ճյուղեր: «Տուն  
չեմ հասնի», մտածեց մըջնիկը:

Հանկարծ տեսավ իր կողքի տերեի վը-  
րա մի թրթուր ե նստած: Իրենից մետաք-  
սե թել ե հանում, քաշում, ճյուղին փաթա-  
թում:

— Թրթուր, այ թրթուր, ինձ իջեցրու,  
վոր գնամ տուն: Մի րոպե ել վոր ուշա-  
նամ, ներս չեն թողնի: Գիշերը դուրսը կմնամ:  
— Կորիք: Տեսնում ես, վոր գործ եմ  
անում: Թել եմ մանում:

— Բոլորն ինձ խղճացին: Վոչ վոք ինձ  
չվոնդեց: Դու առաջինն ես:

Զհամբերեց մըջնիկը, վրա ընկավ, թըր-  
թուրին կծեց:

Թրթուրը յերկյուղից թաթիկները կուչ  
ածեց, տերեից գլորվեց, ցած ընկավ: Իսկ  
մըջնիկն ամուր կտխվել եր նրանից:

Հանկարծ վերեից մի բան նրանց քաշեց:  
Յեզ յերկուսով որորվում եյին մետաք-  
սե թելի վրա, վորի ծայրը փաթաթված եր  
ճյուղին: Իսկ թելը քանի գնում յերկարա-  
նում եր. դուրս եր դալիս թրթուրի փորի-  
կից ու յերկարանում, չեր կտրվում:



Թրթուրն ու մըջնիկն իջնում եյին ու  
իջնում:

Իսկ ներքեսում, մըջնոցում, մըջյուն-  
ներն իրարանցման մեջ են. յելքերն ու  
մուտքերը փակում են:

Բոլորը փակել եյին, միայն մի մուտք  
եր մնում:

Մըջնիկը թրթուրի վրայից ցած թուավ  
և տուն մտավ:

Հենց այդ ժամանակ ել արել մայր  
մտավ:



ԳԻԱԸ 50 Կ.

**В. БИАНКИ**  
**ПРИКЛЮЧЕНИЯ МУРАВЬЯ**

ГИЗ ССР АРМЕНИИ, ЕРЕВАН, 1936 г.



Տեխ. Խմբագիր՝ Ս. Գասպարյան  
 Մրգագրիչ՝ Ա. Արզականյան

Գլուխին լիազոր Ա.—1124, հրատարակ. 3830, պատվեր 1012, տիրած 4000  
 Պետրակի տպարան, Յերևան, Արշակունյաց պող. 4



2768